ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և նախագծի ընդունման անհրաժեշտությունը.

««Սնանկության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը պայմանավորված է սնանկության ոլորտի բարեփոխման անհրաժեշտությամբ: 2019 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունվեցին և 2020 թվականի ապրիլի 15-ին ուժի մեջ մտան «Սնանկության մասին» օրենքում (այսուհետ՝ Օրենք) իրականացված վերջին մեծածավալ փոփոխությունները, նախատեսվեցին նոր կարգավորումներ կառավարիչների ինստիտուտի, սնանկության վարույթում քննվող քաղաքացիական գործերի, ապահովված պարտատերերի իրավունքների իրացման վերաբերյալ և այլն: Սակայն իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ առկա կարգավորումների պայմաններում դեռևս խնդիրներ կան և օրենսդրական փոփոխությունների իրականացումն անհրաժեշտություն է: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի 8-րդ նպատակի 3-րդ կետով նախատեսվել է մշակել էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման հիման վրա «Սնանկության մասին» օրենքի փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծ:

Իրավակիրառ պրակտիկայում ծագած խնդիրները հիմնականում հանգում են հետևյալին.

1.1) Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 2019-2022 թվականներին աճել են պարտապան ֆիզիկական անձանց կողմից սնանկության դիմում ներկայացնելու դեպքերը: Մասնավորապես 2019 թվականին ներկայացվել է 987, 2020 թվականին՝

1747, 2021 թվականին՝ 1961 դիմում, իսկ 2022 թվականին՝ 2800 դիմում[1]: Այսպիսով, շատ դեպքերում կամավոր սնանկության դիմում ներկայացնելը դարձել է պարտավորությունների կատարումից խուսափելու միջոց: Ուստի անհրաժեշտ է Օրենքով սահմանել մեխանիզմներ, որոնք կկանխեն նման չարաշահումները և սնանկության վարույթը կծառայեցնեն իր նպատակին:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է այն փաստաթղթերի ցանկը, որոնց ներկայացման դեպքում միայն դատարանը կարող է դիմումն ընդունել վարույթ: Նորմի ձևակերպումից ակնհայտ է դառնում, որ նման պահանջը դիսպոզիտիվ է և պարտապանի կողմից որոշ փաստաթղթեր թերի ներկայացվելու դեպքում Օրենքի 19-րդ հոդվածի «զ» կետի ուժով դրանք վարույթի ընթացքում ներկայացվում են կառավարչին:

Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սնանկության վարույթի կարգով քննվող գործերը տարբերվում են հայցային վարույթի կարգով քննվող գործերից և իրենց բնույթով նման են հատուկ վարույթի կարգով քննվող գործերին, ուստի գործի ըստ էության քննություն չի իրականացվում (որոշ փաստաթղթեր կարող են ներկայացվել հայցադիմումը վարույթ ընդունվելուց հետո), և օրենքով սահմանված փաստաթղթերի ամբողջական փաթեթի ներկայացման դեպքում միայն դատարանը կարող է դիմումն ընդունել վարույթ: Այնինչ, ներկայիս կարգավորմամբ թույլատրվում է դիմումին կից չներկայացված փաստաթղթերը ներկայացնել նաև պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռը կայացնելուց հետո:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով սահմանվում է, որ պարտապանը պետք դիմումին կից ներկայացնի նաև տեղեկություններ (ապացույցներ) այլ գույքային իրավունքների վերաբերյալ: Նման տեղեկություններ կարող են ներկայացվել համապատասխան պետական մարմիններից ստացված հարցման պատասխանների հիման վրա: Օրենքով հստակ սահմանված չէ պետական մարմինների սպառիչ ցանկը, ուստի դատարանները դրսևորում են հայեցողական մոտեցում, ինչի արդյունքում չի ձևավորվում միասնական պրակտիկա:

[1]Տե՛ս https://court.am/hy/statistic

1.2) Կարևոր է նաև Օրենքի փոփոխություններով հնարավորինս բացառել կեղծ կամ կանխամտածված սնանկության դիմումների ներկայացումը: Ուստի պետք է սահմանել պարտապանի կողմից այնպիսի հիմնավորումների ներկայացումը, որոնցով կապացուցվի սնանկության դիմում ներկայացնելու հիմքերի առկայությունը: Մասնավորապես պարտապանը պետք է հիմնավորի, որ անհնարին է եղել պարտատերերի պահանջների ամբողջ ծավալով բավարարումը, կամ տնտեսական գործունեությունը էականորեն վատթարացել է: Նման պրակտիկա առկա է Ռուսաստանի Դաշնությունում[2], Էստոնիայում[3], Լիտվայում[4], Ղազախստանում[5]:

Մասնավորապես Ռուսաստանի Դաշնության «Անվճարունակության մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ պարտապանի դիմումը պետք է ներառի հիմնավորումներ՝ պարտապանի գույքի վրա բռնագանձման կամ այլ գործողությունների արդյունքում պարտատերերի պահանջներն ամբողջությամբ բավարարելու անհնարինության կամ տնտեսական գործունեության էական վատթարացման վերաբերյալ:

Էստոնիայի «Սնանկության մասին» օրենքի 13-րդ պարագրաֆի 2-րդ կետի համաձայն՝ պարտապանը պետք է հիմնավորի իր սնանկությունը՝ կցելով բացատրություն սնանկության պատճառների վերաբերյալ: Նույն հիմքերն են սահմանում նաև համապատասխանաբար Լիտվայի «Կամավոր սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասը և Ղազախստանի «Վերակառուցման/վերականգնման և սնանկության» մասին օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը:

Միաժամանակ պարտապանը պետք է ապացուցի, որ գործուն միջոցներ է ձեռնարկել պարտատերերի հետ հաշտության եզրեր գտնելու համար՝ մինչև սնանկության դիմում ներկայացնելը: Նման պրակտիկա առկա է Գերմանիայում[6], որտեղ պարտապանը դիմումին կից ներկայացնում է տեղեկանք՝ նշելով, որ մինչև դատարան

---

[2]Տե՛ս http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_39331/
[3]Տե՛ս https://www.riigiteataja.ee/en/eli/511072014018/consolide
[4]Տե՛ս https://www.ilo.org/dyn/natlex/docs/ELECTRONIC/94758/111305/F-1502696089/LTU94758.
[5]Տե՛ս https://adilet.zan.kz/eng/docs/Z1400000176
[6]Տե՛ս https://www.justiz.nrw.de/WebPortal_en/projects/ieei/documents/public_papers/german_insolvency.pdf

դիմելը, 6 ամսվա ընթացքում պարտապանը փորձել է պարտատերերի հետ ձեռք բերել համաձայնություն, սակայն չի հաջողվել:

1.3) էլեկտրոնային եղանակով տեղեկատվության տարածման ներկայիս ժամանակաշրջանում դատարանում կոնկրետ սնանկության գործով տեղեկատվության թղթային տարբերակով տեղադրումը նյութատար և անարդյունավետ գործողություն է: Նշված տեղեկատվությունը պրակտիկորեն կարող է հասանելի լինել դատարան մուտք գործող անձանց համար, ակնհայտ է, որ նման անձանց թիվը այդ տեղեկատվության թիրախի միայն չնչին տոկոսն է: Բացի այդ, դատարանները չունեն հատուկ հարմարեցված կահավորանք՝ սնանկության բոլոր գործերով պահանջվող տեղեկատվությունը տեղադրելու համար:

1.4) Օրենքի 17-րդ հոդվածով կարգավորվում են հարկադրված սնանկության դիմումի հիման վրա պարտապանին սնանկ ճանաչելու հարաբերությունները, այդ թվում՝ պարտապանի կողմից իր սնանկությունը վիճարկելու դեպքերը՝ գրավոր առարկություններ ներկայացնելու միջոցով: Այնուամենայնիվ, Օրենքով չի կարգավորվում պարտապանի գրավոր առարկության բովանդակությանը և կից անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվող պահանջները: Ընդ որում օրենքը չի կարգավորում նաև այն դեպքերը, թե ինչ ժամկետներում կարող է պարտապանը լրացնել առարկությունը կամ ներկայացնել լրացուցիչ ապացույցներ՝ իրենից անկախ պատճառներով դրանք առարկությամբ չներկայացնելու պարագայում:

1.5) Իրավակիրառ պրակտիկայում խնդիր է նաև Օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կարգավորման կիրառումը: Մասնավորապես, գործող իրավակարգավորման պարագայում սնանկության գործի վարույթը կարճվելու, սնանկության դիմումը մերժվելու, ինչպես նաև ժամանակավոր կառավարչի՝ կառավարիչ չնշանակվելու դեպքերում ժամանակավոր կառավարչի ամսական վարձատրությունը կատարվում է դատարանի կողմից համապատասխան վճիռը (որոշումը) կայացնելու պահին նախորդող վերջին մեկ տարում համապատասխանաբար պարտապանի տնօրենի համար հաշվարկված վարձատրության կամ ֆիզիկական անձ պարտապանի

տարեկան եկամտի 1/12-ի չափով, բայց ոչ պակաս, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափով, իսկ ֆիզիկական անձ պարտապանի՝ վերջին մեկ տարվա ընթացքում եկամուտ չունենալու դեպքում՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափով: Նման կարգավորման պարագայում լինում են դեպքեր, երբ ժամանակավոր կառավարչինտրվող վարձատրության չափը չի համապատասխանում վերջինիս կողմից կատարվող աշխատանքի ծավալին: Այնինչ, հարկ է նշել, որ սնանկության ժամանակավոր կառավարչին վերապահված են սահմանափակ լիազորություններ, և ժամանակավոր կառավարիչն իր լիազորություններն իրականացնում է Օրենքով սահմանված հստակ ժամանակահատվածում՝ սնանկ ճանաչելու դիմումը վարույթ ընդունելուց հետո մինչև պարտապանին սնանկ ճանաչելը կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելը: Ըստ այդմ, անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել ժամանակավոր կառավարչի վարձատրության կարգը:

Բացի այդ, կառավարիչների վարձատրությանը վերաբերող մեկ այլ խնդիր է Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, որի համաձայն կառավարիչը հավաքագրված գումարների բաշխումից ստանում է վարձատրություն, բացառությամբ գույքի իրացումից ծագող հարկային պարտավորությունների կատարման ապահովման նպատակով բաշխվող գումարների: Պրակտիկայում հաճախ են հանդիպում դեպքեր, երբ մեկ կամ մի քանի գույքերի առկայության պայմաններում դրանց վաճառքից մարվում է պարտավորությունների որոշ մասը, օտարումից առաջանում են հարկեր, որոնք հաշվառվում են որպես օրենքի 82-րդ հոդվածի «ե» հերթի պարտավորություն: Նշված խնդրի վերաբերյալ Օրենքի գործող տրամաբանությունը հանգում է նրան, որ եթե կառավարիչը աշխատանք է իրականացնում և հավաքագրում է միջոցներ, որոնցով, բնականաբար, պետք է առաջնահերթ մարվի այդ հարկային պարտավորությունը, կառավարիչը այդ միջոցների բաշխումից վարձատրություն չի ստանում: Այնինչ, ակնհայտ է, որ դրանով նվազում է կառավարչի նախաձեռնողականությունը և

շահագրգռվածությունը միջոցներ հավաքագրելու ուղղությամբ: Ըստ այդմ, անկախ այն հանգամանքից, թե ինչ ուղղությամբ է բաշխվում գումարը, դրանց աղբյուրը հավաքագրված գումարներն են, որոնց բաշխումից կառավարիչը ունի կատարված աշխատանքի համար բավարարում ստանալու իրավունք:

1.6) Օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ պարտատերերի առաջին ժողովի նշանակման վայրը սահմանված չէ, իսկ դատարանները որպես կանոն առաջին ժողովը նշանակում են դատարանի շենքում: Շատ դեպքերում դատարանների շենքերը հարմարեցված չեն ժողովներ անցկացնելու համար, մասնավորապես, չկան ժողովի անցկացման համար առանձնացված սենյակներ, համակարգչային տեխնիկա՝ ժողովին առնչվող փաստաթղթերը կազմելու և տպելու համար: Ընդ որում, այս պրակտիկան կիրառվում է նաև այն դեպքում, երբ կառավարիչը ունի իր նախընտրած և բավարար պայմաններ ապահովող վայրը, սակայն այնպիսի օրենսդրական հնարավորություն, որով դատարանը իրավասու կլիներ կառավարչի առաջարկի հիման վրա ժողովի անցկացման վայր նշանակել, առկա չէ, ինչը առաջացնում է լրացուցիչ անհարմարություններ:

1.7) Օրենքի 23-րդ հոդվածով կարգավորվում են սնանկության կառավարիչների որակավորման հարաբերությունները, որի 2-րդ մասով սահմանվում է, որ անձը չի կարող որակավորվել որպես կառավարիչ, եթե հանրային ծառայող է: Նույն կարգավորումն է նախատեսված նաև ի կատարումն Օրենքի ընդունված Արդարադատության նախարարի 2020 թվականի մարտի 13-ի «Սնանկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը, որակավորման ստուգմանը մասնակցելու դիմումին ներկայացվող պահանջները, որակավորման ստուգմանը մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը, որակավորման ստուգման և որակավորում շնորհելու ընթացակարգը սահմանելու մասին» N 112-Ն որոշման 3-րդ հավելվածով (այսուհետ՝ Հավելված):

Այսինքն՝ հանրային ծառայողները, առանց բացառության, հնարավորություն չունեն որակավորվել որպես սնանկության գործերով կառավարիչ: Այնինչ, օրինակ,

«Հանրային ծառայության մասին» օրենքում հանրային ծառայողներին հնարավորություն է տրվում պաշտոնի նշանակվելու (ընտրվելու) դեպքում՝ 1 ամսվա ընթացքում, ապահովել նույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված անհամատեղելության պահանջների կատարումը: Բացի այդ, «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալու միասնական քննությանը (որակավորման քննություն) մասնակցելու իրավունք ունեցող անձանց վերաբերյալ չափանիշները, որով հանրային ծառայության մեջ գտնվելը որպես խոչընդոտ չի նախատեսվել որակավորման քննությանը մասնակցելու համար:

Օրենքի գործող կարգավորման դեպքում, այն հանրային ծառայողները, ովքեր ցանկություն ունեն զբաղվել սնանկության գործերով և նշանակվել որպես կառավարիչ, զրկված են այդ իրավունքից:

1.8) Օրենքով նախատեսվում է սնանկության վարույթի շրջանակներում կազմակերպվող աճուրդներն անցկացնել էլեկտրոնային եղանակով: Այդ աճուրդների կազմակերպման համար անհրաժեշտություն է առաջանում նաև ապահովել աճուրդի մասնակիցների կողմից կատարվելիք վճարումների՝ էլեկտրոնային եղանակով գանձման հնարավորություն: Հարկ է նշել որ յուրաքանչյուր սնանկության գործով հատուկ հաշիվը հնարավոր չէ օգտագործել որպես էլեկտրոնային աճուրդների համար նախատեսված հաշիվ և վճարումները կատարել այդ հաշվին: Հետևաբար անհրաժեշտություն է առաջացել կարգավորել նշված խնդիրը՝ էլեկտրոնային աճուրդների համար նախատեսված վճարումները կառավարչի կողմից պատշաճ ապահովելու նպատակով:

1.9) Օրենքով սահմանված է պարտատերերի ժողովի կազմակերպման և անցկացման ընթացակարգ, որը նախատեսում է նաև հեռակա կարգով ժողովի անցկացման հնարավորություն: Հարկ է նշել, որ, այնուամենայնիվ, հեռակա կարգով ժողովի կազմակերպման հստակ ընթացակարգ Օրենքը չի սահմանում: Բացի այդ, էլեկտրոնային արդարադատության գործիքների կիրառման պարագայում անհրաժեշտություն է առաջանում գործող կարգավորումների համապատասխանեցում՝ հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկությունները:

1.10) Օրենքը սահմանում է պահանջների ներկայացման մեկամսյա ժամկետ, որից հետո ներկայացված պահանջների համար Օրենքի 46-րդ հոդվածով սահմանվում է այլ ընթացակարգ: Սակայն նույն հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ Օրենքը չի կարգավորում մեկամսյա ժամկետի հաջորդ օրվանից մինչև պահանջների վերջնական ցուցակի հաստատման օրը ներկայացված պահանջների հետ կապված հարաբերությունները: Բացի այդ, Օրենքը չի սահմանում նաև թերությունները վերացնելուն ուղղված կարգավորումներ այնպիսի դեպքերի համար, երբ պահանջ ներկայացնելիս չեն պահպանվում Օրենքով սահմանված պահանջները:

1.11) Օրենքի գործող կարգավորումների պարագայում ֆինանսական առողջացման ծրագիրը կառավարչին հանձնելու ընթացակարգ սահմանված չէ: Սակայն պետք է հաշվի առնել, որ կառավարիչը համարվում է առանցքային դերակատար սնանկության վարույթի, այդ թվում՝ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ընթացքում: Կառավարիչը պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրի իրականացման ընթացքում ունի մի շարք լիազորություններ, մասնավորապես՝ ֆինանսական առողջացման ծրագիր ներկայացնելու՝ Օրենքով կամ երկարաձգման մասին դատարանի որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո սահմանված ժամկետում հրավիրում է ժողով ֆինանսական առողջացման ծրագիրը (ծրագրերը) քննարկելու նպատակով, պարտապանը ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները պարտավոր է կատարել կառավարչի վերահսկողությամբ, ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ կառավարիչը պարտավոր է դատարան ներկայացնել հաշվետվություններ և այլն:

Օրենքում նախատեսված չէ նաև կարգավորում, որի համաձայն դատարանը հնարավորություն կունենա Օրենքով սահմանված պահանջներին չբավարարող ֆինանանսական առողջացման ծրագիրը վերադարձնել այն ներկայացնողին՝ առկա թերությունները շտկելու և կրկին ներկայացնելու համար: Ներկայումս Օրենքը նախատեսում է միայն առանց քննության թողնելու ինստիտուտը, որի դեպքում

ֆինանանսական առողջացման ծրագիր ներկայացնողները շատ դեպքերում զրկվում են պատշաճ և Օրենքով սահմանված պահանջներին համապատասխանող ծրագիր ներկայացնելու հնարավորությունից:

Բացի այդ, Օրենքի 62-րդ հոդվածը նախատեսում է կարգավորում, որի համաձայն ֆինանսական առողջացման ծրագիրը (ծրագրերը) քննարկելու նպատակով պարտատերերի ժողովի հրավիրման մասին տեղեկությունը պետք է հրապարակվի իրավաբանական անձանց պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում՝ նշելով ծրագիրը (ծրագրերը) ներկայացնողի անունը (անվանումը) և ժողովի հրավիրման տարին, ամիսը, ամսաթիվը:

Միաժամանակ հարկ է նշել, որ Նախագծով նախատեսվում է հստակ սահմանել ժողովների անցկացման եղանակները և այդ եղանակների առանձնահատկություններով պայմանավորված հստակեցնել ժողովի մասին ծանուցմանը և քվեաթերթիկի բովանդակությանը առնչվող դրույթները: Այսինքն՝ նախատեսվում է բարեփոխել ժողովների մասին ծանուցման վերաբերյալ կարգավորումները, այդ թվում՝ էլեկտրոնային համակարգի ներդրման առանձնահատկությունների հաշվառմամբ:

Ընդ որում, պետք է նշել նաև, որ ֆինանսական առողջացման ծրագիրը (ծրագրերը) քննարկելու նպատակով հրավիրվող ժողովը ևս պարտատերերի ժողով է և դրա հրավիրման վերաբերյալ ծանուցումները պետք է իրականացվեն ժողովի մասին ծանուցման ընդհանուր կարգին համապատասխան:

1.12) Օրենքում ապահովված իրավունքի առարկայի իրացման մասին դիմումի մերժման հիմքերը ամբողջական չեն: Օրենքում չի ամրագրվել այն հանգամանքը, որ, ի թիվս այլնի, դիմումի սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված լինելը ևս պետք է հիմք հանդիսանա ներկայացված դիմումը մերժելու համար:

1.13) Օրենքի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ Օրենքի 33-րդ և 43-րդ հոդվածների ձևակերպումների մեջ առկա է հակասություն: Մասնավորապես, Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասությամբ նախատեսվում է, որ պարտատերերի ժողովին քվեարկության ձայնի իրավունքով կարող են մասնակցել

պարտատերերի առաջին ժողովին ներկայացած բոլոր պարտատերերը, իսկ Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ նախադասությամբ սահմանվում է, որ եթե ապահովված իրավունքի առարկայի արժեքը (մեկնարկային գինը) հրապարակային սակարկություններով իրացման ընթացքում կամ գույքի կորստի (ոչնչացման, հափշտակության) կամ վնասելու արդյունքում նվազում է ապահովված պահանջի չափից, ապա ապահովված պարտատերը ձեռք է բերում քվեարկության ձայնի իրավունք՝ ապահովված պահանջի չափի և գույքի արժեքի տարբերության չափով: Նշված կարգավորումների համադրության արդյունքում կարող ենք արձանագրել, որ եթե Օրենքի 33-րդ հոդվածի համաձայն պարտատերերի ժողովին քվեարկության ձայնի իրավունքով կարող են մասնակցել պարտատերերի առաջին ժողովին ներկայացած բոլոր պարտատերերը, ապա Օրենքի 43-րդ հոդվածի դեպքում ապահովված պարտատերը ինչ-ինչ հանգամանքների դեպքում ձեռք է բերում քվեարկության ձայնի իրավունք: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջացել վերացնել նշված կարգավորումների միջև առկա հակասությունը:

1.14) Չնայած Օրենքը նախատեսում է պարտապանի գործունեությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն վերսկսելու հնարավորություն, այնուամենայնիվ ներկայումս գործող կարգավորումները բավական հստակ և համապարփակ չեն, ինչը երբեմն դժվարություններ է ստեղծում սնանկության վարույթի ընթացքում: Հարկ է նշել, որ պարտապանի գործունեությունը վերսկսումը, ըստ էության, լուծարման վարույթի ընթացքում պարտապանի առողջացման հնարավորություն ընձեռող ընթացակարգ է: Գործընթացի լավագույնս կազմակերպման և լուծարման վարույթի ընթացքում պարտապանի առողջացման հնարավորությունը մեծացնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել խմբագրել Օրենքի 73-րդ հոդվածը:

1.15) Օրենքի 76-րդ հոդվածը սահմանում է գույքի վաճառքի միջնորդությանն առնչվող որոշ պարտադիր պայմաններ, որոնցից մեկը աճուրդի անցկացման օրն է: Որոշ դեպքերում աճուրդի օրը հստակ նշել հնարավոր չի լինում, քանի որ բողոքարկումներով կամ այլ պատճառներով պայմանավորված աճուրդը հնարավոր չի

լինում նշանակել միջնորդությամբ նշված օրը: Բացի այդ, նույն հոդվածը սահմանում է կառավարչի առաջարկած գնից ավելի բարձր գնով վաճառելու ընթացակարգ, ըստ որի պարտատերը կարող է առարկել այդ գնի դեմ՝ վճարելով երաշխիքային գումար: Նշված գործիքակազմը, սակայն, սպառիչ պատասխան չի տալիս պարտատիրոջ առաջարկած գնով գույքը չվաճառվելու դեպքին, մասնավորապես, չի սահմանում, թե դրանից հետո գույքի աճուրդը ինչ գնով պետք է շարունակվի կամ արդյոք այդ դեպքում աճուրդը պետք է շարունակվի:

Հարկ է նշել, որ աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգերը վերանայման կարիք ունեն, խնդիրները բազմազան են, մասնավորապես, այդպիսի խնդիր է Օրենքում աճուրդի ընդհատման միայն մեկ դեպքի առկայությունը, մինչդեռ դրանք մի քանիսն են:

Այս և այլ հարցերի կարգավորումը ներկայումս անհրաժեշտություն է սնանկության վարույթում աճուրդի գործընթացները պատշաճ կազմակերպելու և անցկացնելու համար:

1.16) Օրենքի 77-րդ հոդվածը կարգավորում է գույքի ուղղակի վաճառքին առնչվող հարաբերությունները: Այս առումով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքի կառավարմանն առնչվող դրույթներում և նշված հոդվածի կարգավորումներում առկա է որոշակի հակասություն: Առաջին դեպքում սահմանված է, որ համատեղ սեփականություն հանդիսացող գույքում որևէ մեկի բաժնի օտարման դեպքում մյուս համասեփականատերերը ունեն գնելու նախապատվության իրավունք, սակայն ստացվում է, որ եթե որևէ համասեփականատեր համաձայնություն տա մյուսի բաժինը գնելուն, հնարավոր է, որ չկարողանա օգտվի իր նախապատվության իրավունքից, քանի որ Օրենքի 77-րդ հոդվածի համաձայն՝ դրա համար լրացուցիչ պահանջվում է պարտատերերի ժողովի համաձայնությունը, որի բացակայության պայմաններում առուվաճառքի գործարք կնքել հնարավոր չէ:

1.17) Օրենքի 77.1-ին հոդվածը սահմանում է կառավարչի կողմից վտարման պահանջ ներկայացնելու դեպքերը, մասնավորապես, անշարժ գույքը զբաղեցնող սեփականատիրոջ կամ անօրինական հիմքով անշարժ գույքը օգտագործող անձանց

վտարման ընթացակարգը: Հարկ է նշել, որ պրակտիկայում հաճախ շարժական գույքի դեպում ևս անհրաժեշտ է լինում կիրառել համանման գործիքակազմ, որը, սակայն, Օրենքով նախատեսված չէ:

1.18) Անհրաժեշտ է անդրադառնալ նաև այն դեպքերին, երբ պարտապանը սնանկ է ճանաչվել, վերջինիս մասնակցությամբ այլ սնանկության գործը կարճվել է կամ գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնվող գործերը կարճվել կամ ավարտվել են, սակայն հայցվորի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը չի վերադարձվել: Օրենքի ներկայիս կարգավորումները չեն պարունակում որևէ նշում, թե հայցվորի կողմից սնանկության վարույթում պահանջ ներկայացնելիս որ հերթում է գրանցվելու պահանջը:

Վճռաբեկ դատարանը թիվ ՍՆԴ/1735/04/19 սնանկության գործով[7] արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի այլ գործով պետական տուրքի գծով դատական ծախսը սնանկության գործով չի կարող համարվել «դատական ծախս», քանի որ այլ գործերով առաջացած դատական ծախսերը «դատական ծախս» են միայն տվյալ գործի շրջանակներում: Ուստի պետական տուրքի գծով դատական ծախսը գրանցման է ենթակա Օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթում: Վերոգրյալի հաշվառմամբ Օրենքում անհրաժեշտ է ամրագրել, որ սնանկ ճանաչված պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջով քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնված, կարճված կամ ավարտված դատական գործերով նախապես վճարված պետական տուրքի գումարը ենթակա է գրանցման 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» հերթում:

1.19) Կառավարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1133-Լ որոշման Հավելված 1-ով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությամբ ««Էլեկտրոնային

[7] Տե՛ս ըստ դիմումի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ Հովհաննես Գրիգորյանին սնանկ ճանաչելու պահանջի մասին թիվ ՍՆԴ/1735/04/19 սնանկության գործով արտահայտված իրավական դիրքորոշումը:

արդարադատություն» միասնական կառավարման համակարգի ստեղծում և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում ու արդիականացում» ռազմավարական նպատակի շրջանակներում որպես առանձին ռազմավարական ուղղություն նախատեսվել է «Արդարադատության նախարարության ոլորտներին վերապահված հանրային գործառույթների և տվյալների բազաների թվայնացումը կամ արդիականացումը»: Արդարադատության նախարարության ոլորտներին վերապահված հանրային գործառույթների և տվյալների բազաների թվայնացմանն ու արդիականացմանը անդրադարձ է կատարվում «Էլեկտրոնային արդարադատություն» և «Էլեկտրոնային դատարան» էլեկտրոնային համակարգերի ներդրմանը զուգահեռ՝ հաշվի առնելով դրանց դերն ու նշանակությունը՝ էլեկտրոնային արդարադատության համակարգի ստեղծմանն ուղղված ռազմավարական նպատակի իրագործման ճանապարհին:

«Էլեկտրոնային դատարան» և «Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգերի շրջանակներում նախատեսվել է մշակել, ներդնել և գործարկել «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի սնանկության գործերով էլեկտրոնային մոդուլը:

Էլեկտրոնային սնանկության համակարգի (e-bankrupcy) ամբողջական ներդրումը պահանջում է դրան համապատասխան օրենսդրության առկայություն, որը հնարավորություն կտա սնանկության վարույթը՝ սկսած դրա հարուցումից մինչև վարույթի ավարտը, հնարավորինս իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ առանց լրացուցիչ փաստաթղթաշրջանառության՝ առավելագունս բացառելով մարդկային միջամտությունը և գործընթացներն իրականացնելով առանց կողմերի անմիջական մասնակցության: Էլեկտրոնային արդարադատության համակարգերի ներդրմանը զուգահեռ իրավական դաշտի համապատասխանեցումը և նախապատրաստումը բխում են նաև այս ոլորտում սահմանված Եվրոպայի խորհրդի չափանիշներից. օրինակ՝ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ) կողմից

մշակված ուղեցույցի համաձայն՝ էլեկտրոնային արդարադատության վերաբերյալ օրենսդրությունը անհրաժեշտ նախապայման է դատական ընթացակարգերի հաջող թվայնացման համար[8]: Իր հերթին, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, նույնպես ընդգծելով նախօրոք օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, նշել է նաև, որ դրանք պետք է ուժի մեջ մտնեն էլեկտրոնային համակարգերի ներդնումից հետո միայն[9]:

Էլեկտրոնային եղանակով արդարադատության կազմակերպումը իրենից ենթադրում է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով «Սնանկության մասին» օրենքով սահմանված գործառույթների էլեկտրոնային եղանակով իրականացում: Էլեկտրոնային արդարադատությունը իրենից ենթադրում է սնանկության վարույթի և քաղաքացիական դատավարության տարբեր գործընթացների էլեկտրոնային եղանակով կազմակերպման հնարավորության նախատեսում, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով գործերի վարում, փաստաթղթաշրջանառության ապահովում, դատական ծանուցումների կազմակերպում և այլն: Սնանկության վարույթի և քաղաքացիական դատավարության տարբեր գործընթացների էլեկտրոնային եղանակով կազմակերպումը կարող է նպաստել դատական նիստերի ձգձգումների կրճատմանը և ողջամիտ ժամկետներում գործերի քննության ապահովմանը:

Միաժամանակ հարկ է նշել, որ աշխարհի շատ երկրներում արդեն իսկ այս կամ այն չափով ներդրվել են արդարադատության էլեկտրոնային համակարգերը, ինչպես օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Կանադա, Միացյալ Թագավորություն, Սինգապուր, Ավստրալիա:

1.20) 2019 թվականին իրականացված օրենսդրական փոփոխություններով Օրենքի 95-րդ հոդվածում կատարվել է լրացում, որի համաձայն՝ հոդվածը չի տարածվում պարտապանի աշխատավարձից կատարվող գանձումների վրա, այլ կերպ ասած՝ այդ հոդվածում կիրառվող գույք եզրույթի շրջանակներում այն չի դիտարկվում: Կատարված լրացումը նպատակ է հետապնդել ապահովել պարտատերերի

[8] Տե՛ս CEPEJ, Guidelines on electronic court filing (e-filing) and digitalisation of courts, 2021:
[9] Տե՛ս CCJE. 2011. Opinion No. (2011)14 of the CCJE “Justice and information technologies (IT)” :

պահանջների առավելագույնս բավարարումը: Ասվածը նշանակում է, որ կատարված փոփոխությունների ուժով աշխատավարձի նկատմամբ բռնագանձումը սնանկության վարույթի շրջանակներում կատարվում է ընդհանուր հիմունքներով և որևէ առանձնահատկություն այդ հարցում նախատեսված չէ:

Սակայն, դատական պրակտիկայում այս հարցին տրվել է այլ մեկնաբանություն: Մասնավորապես, օրինակ՝ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը թիվ ՍՆԴ/1823/04/20 սնանկության գործով 03.03.2021 թվականի որոշմամբ հանգել է նրան, որ Օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավակարգավորումը վերաբերում է անմիջապես գործարքի արդյունք հանդիսացող գույքի ձեռքբերման դեպքերին, և դրա կանոնները կիրառելի չեն աշխատանքային իրավահարաբերությունների նկատմամբ: Դատարանը, ի թիվս այլնի, նշել է, որ աշխատավարձի արգելադրումը սնանկության վարույթում չի կարող իրականացվել այնպես, որ պարտապանը սնանկ ճանաչվելուց հետո անորոշ ժամանակով զրկվի իր աշխատանքի դիմաց վարձատրությունն օգտագործելու հնարավորությունից, քանի որ դա անմիջական խոչընդոտ կհանդիսանա սնանկության վարույթի ընթացքում պարտապանի սոցիալ-ֆինանսական վերականգնման համար և կկաշկանդի նրան դրսևորել որևէ նախաձեռնողականություն նոր աշխատանք փնտրելու կամ եկամուտներ ստանալու հարցում: Դատարանի գնահատմամբ՝ Օրենքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը տարածվում է Աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով միայն մինչև սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահը վճարված աշխատավարձից կատարվող գանձումների վրա և պարտապանի՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ստացվող աշխատավարձը չի մտնում Օրենքի 95-րդ հոդվածի իմաստով վաճառքի ենթակա գույքի կազմի մեջ:

Այսպիսով, անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել, որ պարտապանի՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ստացվող աշխատավարձը ևս մտնում է Օրենքի 95-րդ հոդվածի իմաստով վաճառքի ենթակա գույքի կազմի մեջ և

աշխատավարձի բռնագանձման ենթակա մասը դատարանի որոշման հիման վրա կարող է գանձվել:

Միաժամանակ, վերոնշյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտություն է առաջացել սահմանել նաև, որ ֆիզիկական անձի առողջացման ծրագրում ևս կարող է օգտագործվել պարտապանի աշխատավարձը, մասնավորապես այն մասը, որի վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բռնագանձում տարածվել:

1.21) Օրենքի մի շարք կարգավորումներ տարընկալումների տեղիք են տալիս, իրավական որոշ դրույթներ բավարար չափով հստակ չեն, առկա են տեխնիկական վրիպակներ:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծով առաջարկվում է.

- սնանկության գործով տեղեկատվությունը դատարանում փակցնելու պահանջը հանել.

- Օրենքով կարգավորել պարտապանի գրավոր առարկության բովանդակությանը և կից անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվող պահանջները.

- հնարավորություն ընձեռել կառավարիչներին՝ ներկայացնել իրենց համար նախընտրելի ժողովի անցկացման վայրը.

- հստակեցնել ժամանակավոր կառավարչի և կառավարչի վարձատրության կարգը.

- հնարավորություն տալ հանրային ծառայողներին մասնակցելու սնանկության կառավարիչների որակավորմանը, պայմանով, որ վերջիններիս որպես սնանկության գործով կառավարիչ գործունեությունը կասեցվում է մինչև ծառայությունից ազատվելը.

- Օրենքում կառավարչի համար նախատեսել հնարավորություն՝ ՀՀ-ում գործող բանկերից մեկում իր անունով բացելու մեկ դրամային հաշիվ՝ իր վարույթում գտնվող բոլոր սնանկության գործերով նախատեսված աճուրդների վճարումները գանձելու համար.

- հստակ սահմանել ժողովների անցկացման եղանակները՝ առկա, հեռավար, ինչպես նաև գրավոր հարցումների միջոցով, և այդ եղանակների առանձնահատկություններով պայմանավորված հստակեցնել ժողովի մասին ծանուցմանը և քվեաթերթիկի բովանդակությանը առնչվող դրույթները: Նույն տրամաբանությամբ նախատեսվում է նաև հնարավորություն տալ խորհրդի նիստերն անցկացնել հեռավար կարգով.

- կարգավորել պահանջների ներկայացման համար սահմանված մեկամսյա ժամկետից հետո մինչև պահանջների ցուցակի հաստատումը ընկած ժամանակահատվածում ներկայացված պահանջներին առնչվող ընթացակարգը, ինչպես նաև նախատեսել Օրենքով սահմանված պահանջներին չհամապատասխանող պահանջ ներկայացնելու դեպքում թերությունները վերացնելու հնարավորություն.

- ապահովված իրավունքի առարկայի իրացման մասին դիմումի սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված լինելը սահմանել որպես ներկայացված դիմումը մերժելու հիմք.

- սահմանել, որ ապահովված իրավունքի առարկայի արժեքը (մեկնարկային գինը) հրապարակային սակարկություններով իրացման ընթացքում կամ գույքի կորստի (ոչնչացման, հափշտակության) կամ վնասելու արդյունքում ապահովված պահանջի չափիզ նվազելու դեպքում ապահովված պարտատերը ձեռք է բերում պարտապանին պատկանող իր համապատասխան պարտավորության համար չապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցների բաշխմանը մասնակցելու իրավունք՝ Օրենքի տարբեր կարգավորումների միջև առկա հակասությունը վերացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված.

- ֆինանսական առողջացման ծրագրի ներկայացման ընթացակարգում նախատեսել փոփոխություն՝ սահմանելով ֆինանսական առողջացման ծրագրի օրինակը դատարան ներկայացնելուց առաջ կառավարչին ուղարկելու պահանջ, այն դեպքում, երբ ծրագիրը ներկայացվել է ոչ կառավարչի կողմից, ինչպես նաև նախատեսել ֆինանսական առողջացման ծրագիրը վերադարձնելու ինստիտուտ, որից հետո կրկին

ծրագիրը օրենքով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում դատարանը այն թողնում է առանց քննության.

- հստակեցնել և լրացնել պարտապանի գործունեությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն վերսկսելու վերաբերյալ կարգավորումները.

- կառավարչի հայեցողական իրավունքը՝ վաճառքի ծրագիրը չհաստատվելու դեպքում ծրագիրը հաստատելու միջնորդությամբ դատարան դիմելու վերաբերյալ փոփոխել՝ սահմանելով նման իրավիճակում միջնորդությամբ դատարան դիմելու պարտականություն.

- հանել աճուրդի անցկացման օրը նշելու պահանջը գույքի վաճառքի միջնորդության համար նախատեսված պարտադիր պայմանների շարքից՝ գործընթացի կարգավորվումը վերապահելով Արդարադատության նախարարի հրամանով սահմանված կարգին.

- սահմանել աճուրդի կազմակերպման հստակ ընթացակարգ, ըստ որի առարկությամբ նշված գնով գույքը չվաճառվելու դեպքում այն վաճառքի է ներկայացվում կառավարչի առաջարկած գնով, լրացնել աճուրդի ընդհատման դեպքերը.

- գնելու նախապատվության իրավունքից օգտվելու ցանկության դեպքում սահմանել այլ ընթացակարգ՝ առանց պարտատերերի ժողովի համաձայնության.

- ներդնել նոր ընթացակարգ, ըստ որի կառավարիչը կարող է համապատասխան հիմքերի առկայության դեպքում դիմել դատարան՝ շարժական գույքը իրեն հանձնելուն պարտավորեցնելու պահանջով.

- պարտապանի մասնակցությամբ քաղաքացիական, վարչական կամ արբիտրաժային տրիբունալի վարույթում գտնված կամ պարտապանի սնանկության այլ դիմումի հիմքով՝ կարճված կամ ավարտված դատական գործով նախապես վճարված պետական տուրքի գումարը դիտարկել որպես պահանջ և գրանցել «է» հերթում.

- Օրենքում նոր գլուխ՝ «Սնանկության վարույթում Էլեկտրոնային եղանակով իրականացվող դատավարական և այլ գործողությունների առանձնահատկությունները», ներդնելու ճանապարհով թեթևացնել դատարանների ծանրաբեռնվածությունը,

նպաստել էլեկտրոնային գործիքների կիրառմամբ գործերի առավել արագ քննությանը, դատարանների և դատավարության մասնակիցների ռեսուրսների խնայմանը, գործերի ողջամիտ ժամկետում քննության ապահովմանը, ստեղծել այնպիսի իրավիճակ, որ էլեկտրոնային համակարգի միջոցով, պատշաճ կերպով և համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին համահունչ եղանակով կատարված ցանկացած գործողություն ունենա նույն դատավարական հետևանքները, որը կունենար ավանդական եղանակով կատարված համանման գործողությունը.

- սահմանել, որ Դատարանը, սնանկության գործով կառավարիչները, պարտապանը, պարտատերերը, ինչպես նաև սնանկության վարույթով շահագրգիռ այլ անձինք սնանկության գործերի հետ կապված էլեկտրոնային համակարգից օգտվում են Օրենքով սահմանված կարգով, իսկ Օրենքով կարգավորված չլինելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝ դատարանի և դատավարության մասնակիցների համար սահմանված կարգով: Բացի այդ, արձանագրվել է, որ եթե Օրենքով սահմանված են էլեկտրոնային համակարգի միջոցով գործողությունների իրականացման այլ կանոններ, քան Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ապա սնանկության գործի հետ կապված գործում են Օրենքով սահմանված կանոնները.

- նախատեսել էլեկտրոնային համակարգն օգտագործող անձանց շրջանակը, պարտատերերի ժողովի և խորհրդի անցկացման, ծանուցումների առանձնահատկությունները.

- սահմանել, որ պարտապանի՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ստացվող աշխատավարձը ևս մտնում է Օրենքի 95-րդ հոդվածի իմաստով վաճառքի ենթակա գույքի կազմի մեջ և դատարանի համապատասխան որոշման հիման վրա գանձման ենթակա գումարը գործատուի կողմից պետք է փոխանցվի սնանկության հատուկ հաշվեհամարին, բացի այդ նախատեսել, որ ֆիզիկական անձի առողջացման ծրագրում պարտապանի աշխատավարձի բռնագանձման ենթական մասը ևս կարող է օգտագործվել:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է ապահովել սնանկության վարույթը՝ սկսած դրա հարուցումից մինչև վարույթի ավարտը, էլեկտրոնային եղանակով իրականացնելու հնարավորությունը, ինչպես նաև լուծել իրավակիրառ պրակտիկայում ծագած որոշ հրատապ խնդիրներ, մասնավորապես անդրադառնալով՝ կամավոր սնանկության չարաշահման դեպքերին ու պարտապանի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկին, սնանկության կառավարիչների ինստիտուտի որոշ հարցերի, պարտատերերի ժողովների անցկացման եղանակներին, պարտատերերի պահանջների հնարավորինս բավարարման և պարտապանի վճարունակության վերականգնման, ֆինանսական առողջացման և աճուրդների վերաբերյալ կարգավորումներին: Նախագծի ընդունումը հնարավորություն կտա վերացնել Օրենքում առկա անհստակություններն ու տեխնիկական վրիպակները:

5. Նախագծի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտությունը.

Նախագծերի ընդունման կապակցությամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն առկա չէ:

6. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագիծը բխում է Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի դրույթների իրագործման անհրաժեշտությամբ:

Մասնավորապես՝ Կառավարության 2021-2026 թվականների ծրագրի

«Դատաիրավական բարեփոխումներ» վերտառությամբ 5.3 կետով ոլորտային բարեփոխման կարևոր ուղղություն է հանդիսանում դատարանների ծանրաբեռնվածությունը թեթևացնելու և դատարաններում գործի քննության ժամկետները կրճատելու միջոցով արդարադատության արդյունավետության բարձրացումը: Ըստ այդմ, շարունակվելու են բարեփոխումները նաև սնանկության ոլորտում:

Բացի այդ, Նախագծերի ընդունումը բխում է նաև Կառվարության 2022 թվականի հուլիսի 21-ի N 1133-Լ որոշման Հավելված 1-ով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից: Ռազմավարությամբ ««Էլեկտրոնային արդարադատություն» միասնական կառավարման համակարգի ստեղծում և տվյալների էլեկտրոնային բազաների մատչելիության ապահովում ու արդիականացում» ռազնավարական նպատակի շրջանակներում որպես առանձին ռազմավարական ուղղություն նախատեսվել է «Արդարադատության նախարարության ոլորտներին վերապահված հանրային գործառույթների և տվյալների բազաների թվայնացումը կամ արդիականացումը»: Կառավարության նույն որոշման Հավելված 2-ով հաստատված Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի 1-ին նպատակի 2-րդ կետում նախատեսվել է «Էլեկտրոնային դատարան» դատական գործերի էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի սնանկության գործերով էլեկտրոնային մոդուլի մշակման, ներդրման և գործարկման գործողությունը:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի 8-րդ նպատակի 3-րդ կետով նախատեսվել է մշակել էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման հիման վրա «Սնանկության մասին» օրենքի փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծ: